ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018թ. թիվ 369-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 314-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 07.11.2018թ. թիվ 1573 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2013թ. դեկտեմբերի 4-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 314-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Վարչական մասում՝

1) «Հավաքարար» տողում «1.0» թիվը փոխարինել «2.0» թվով:

2) «Հավաքարար» տողից հետո ավելացնել

Գլխավոր մուտքի հավաքարար	1.0

տողը.

3) «Ընդամենը» տողում «26.0» թիվը փոխարինել «28.0» թվով:

2. «Հիվանդանոցային ընդհանուր ծառայություններ» բաժնի «Ընդունարան» մասում՝

1) «Ընդունարանի հերթապահ բուժքույր» տողից հետո ավելացնել

Ընդունարանի հերթապահ մանկաբարձուհի	4.25

տողը.

2) «Ընդունարանի հերթապահ մայրապետ» տողից հետո ավելացնել

Ընդունարանի հերթապահ մայրապետ ծննդատան մասով	4.25

տողը.

3) «Ընդամենը» տողում «30.0» թիվը փոխարինել «38.5» թվով:

3. «Հիվանդանոցային ստորաբաժանումներ» բաժնի «Վիրահատարան» մասում՝

1) «Վիրահատարանի հերթապահ բուժքույր» տողից հետո ավելացնել

ավտոկլավի բուժքույր	4.25

տողը.

2) «Վիրահատարանի ցերեկային մայրապետ» տողում «1» թիվը փոխարինել «2» թվով:

3) «Վիրահատարանի ցերեկային մայրապետ» տողից հետո ավելացնել

ավտոկլավի հավաքարար	1.0

տողը.

4) «Ընդամենը» տողում «12.5» թիվը փոխարինել «18.75» թվով:

4. «Վերակենդանացման բաժանմունք» բաժնի «Վերակենդանացման, անզգայացման և ինտենսիվ բուժման բաժին /ներառյալ մանկական/» մասում՝

1) «Քույր-տնտեսուհի» տողից հետո ավելացնել

Վերակենդանացման բաժանմունքի ցերեկային մայրապետ	1.0

տողը.

2) «Ընդամենը» տողում «29.0» թիվը փոխարինել «30.0» թվով:

5. Հավելվածի «Ընդհանուրը» տողում «487.0» թիվը փոխարինել «504.75» թվով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Invalid signature

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի 21
ք.Վանաձոր